Արձանագրություն N 4

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար՝ «ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի «Մարգյուղի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի վերանորոգման», «ՀՀ Շիրակի մարզի Մեղրաշեն համայնքի միջնակարգ դպրոցի ջեռուցման համակարգի անցկացման» և «ՀՀ Շիրակի մարզի «Փոքր Մանթաշի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մասնակի վերանորոգման» աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/12/16/20-1 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «11» «մարտի» 2019թ.

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ)	Էդուարդ Ջանջուղազյան

անդամներ ՝

1.Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Մեսրոպ Ղուլյան
2.Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Արթուր Սողոմոնյան
3.Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Լիլիթ Սեդրակյան
4.Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ)	Արեգ Եղիյան

1. ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/12/16/20-1 ծածկագրով ընթացակարգի վերագնահատման նիստի անցկացման վայրը, օրը և ժամը

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի չորս անդամները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/12/16/20-1 ծածկագրով ընթացակարգի վերագնահատման նիստը անցկացվել է 2019 թվականի մարտի 11-ին, ժամը 11:00-ին, ՀՏՋՀ գրասենյակի շենքում, հասցեն՝ 22, ք.Երևան, Ուլնեցի 31, 4-րդ հարկ հասցեում :

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Էդուարդ Ջանջուղազյանը, իսկ քարտուղարն էր՝ Արեգ Եղիյանը:

2. Բացված յուրաքանչյուր էլեկտրոնային փաթեթում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ փոփոխված տեղեկություններ

2.1 ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/12/16/20-1 ծածկագրով ընթացակարգի բացման նիստում էներգո Սվյազ Պրոմ Ստրոյ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը համարվել է հրավերի պահանջներին անհամապատասխան, քանի որ հայտը հաստատված է եղել ոչ վավեր էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ինչի հետևանքով ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/12/16/20-1 ծածկագրով մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ հաջորդ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից՝ 3-րդ Չափաբաժնի մասով Դ.Ա.Ն. ՇԻՆ ՍՊԸ-ն:

2.2 Ս.թ. մարտի 11-ին էկենգ ՓԲԸ-ի կողմից ստացվել է գրություն ի լրումն ս.թ. մարտի 1-ի թիվ 482 գրության, որով էներգո Սվյազ Պրոմ Ստրոյ ՍՊԸ-ի կողմից նույնականացման քարտի փոփոխման արդյունքում առաջացել էր ստորագրության վավերականության խնդիր, ինչը ճշգրտվել է, հետևապես ստացված փաստաթղթերը անհրաժեշտ է դիտել որպես պատշաճ ստորագրված:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովը որոշեց՝

3.1 ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/12/16/20-1 ծածկագրով մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին 3-րդ Չափաբաժնի մասով մասով էներգո Սվյազ Պրոմ Ստրոյ ՍՊԸ-ին:

1.1 Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 44-րդ կետի՝ ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/12/16/20-1 ծածկագրով ընթացակարգի 3-րդ չափաբաժնով՝ ընտրված մասնակից հայտարարել՝ էներգո Սվյազ Պրոմ Ստրոյ ՍՊԸ-ին:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/12/16/20-1 ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին

Որոշվեց՝

3.1 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

3.2 ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/12/16/20-1 ծածկագրով ընթացակարգի 3-րդ չափաբաժնով ընտրված մասնակիցներին առաջարկել անգործության ժամկետի ավարտից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում՝ պայմանագրի գնի 10 տոկոսի չափով:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝

Էդուարդ Ջանջուղազյան

Հանձնաժողովի անդամներ՝

Մեսրոպ Ղուլյան

Արթուր Սողոմոնյան

Լիլիթ Սեդրակյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Արեգ Եղիյան